ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԵՏԱՊՆԴԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ԴՈԿՏ. Ա. Հ. ԹՈՓԱԼԵԱՆ

Հայ ժողովրդի հոգեւոր հարուստ մշակոյթը ունի դարաւոր պատմութիւն։ Մեսրոպեան գրերի ստեղծումից յետոյ հայոց աշխարհում սկսուեց իր ժամանակի համար բացառիկ գրական մի շարժում, որն արտայայտուեց ոչ միայն թարգմանչական աշխատանքով, այլեւ ինքնուրոյն ազգային գրականութեան ստեղծմամբ։

Հինգերորդ դարի կէսերին, հայ հասարակական-քաղաքական կեանքի եւ այդ դարաշրջանի հրամայական պահանջով, մեսրոպեան մատենագրութեան մէջ ծնուեց մի նոր գրական ժանր՝ ազգային պատմագրութիւնը, որն իր ժամանակի համար դարձաւ քաղաքական եւ գաղափարախօսական հզօր զէնք։

Հայ պատմագրութեան զարգացման ընթացքում կարեւոր սահմանագծերից մէկն է հանդիսացել հինգերորդ դարը։ Այն հանդիսացաւ ո՛չ միայն հայ պատմագրութեան արշալոյսը՝ այլեւ այդ դարում հայ պատմագրութիւնը ստեղծեց այնպիսի պատմական երկեր, որոնք չգերազանցուած մնացին հայ պատմութեան մէջ։

Հայ մատենագրութեան այս ժանրը երբեք անտարբեր եղած չէ ժողովրդի կեանքի տարբեր երեւոյթների նկատմամբ եւ իր զարգացման բոլոր ժամանակաշրջաններում գործնականօրէն արձագանգել է ժամանակի հրատապ հարցերին։

Հինգերորդ դարի հայ գրականութիւնն ընդհանրապէս «պատմական որոշ հանգամանքներում առաջ եկած քաղաքական-հասարակական գիտակցութեան բուռն վերելքի արդիւնք էր։ Այդ վերելքը առանձնապէս փայլուն կերպով արտացոլեց ժամանակի պատմագրութիւնը, որը իր հերթին հզօրապէս ներգործեց նրա վրայ ու դրանով հսկայական նշանակութիւն ունեցաւ հայ հասա-

բակական կեանքի ու մտքի յետագայ զարգացման համար, երկար դարերի ընթացքում վառ պահելով ու բորբոքելով ժողովրդի՝ իր գոյութեան համար օտար լծի դէմ մղած ազատագրական պայքարի սրբազան հուրը»[1]։

Հինգերորդ դարի հայ պատմագրութիւնը, որն իր ամբողջութեամբ գիտական ու գեղարուեստական խոշոր արժէք է ներկայացնում, հետապնդեց հայ ժողովրդի պատմութեան այդ կարեւորագոյն դարաշրջանի հասարակական եւ քաղաքական հրատապ խնդիրները – ազատագրական պայքարը, խորտակուած պետական անկախութեան վերականգնումը, ժողովրդի ազգային ինքնագոյութեան պահպանումը, կարճ ժամանակում ժողովրդի մէջ քրիստոնէական գաղափարախօսութեան արմատաւորումը եւ խորացումը, ինչպէս նաեւ ժողովրդի ազգային գիտակցութեան, ազատատենչ ոգու եւ դիմադրողական ուժի բարձրացումը։

Հայ առաջին պատմիչները, երկրի ու ժողովրդի պատմական ճակատագրով մտահոգուած, իրենց ստեղծագործութիւններում լաւագոյնս արտայայտեցին պատմական ժամանակշրջանի ոգին, ինչպէս նաեւ հայ ժողովրդի քաղաքական գոյավիճակի եւ հոգեւոր կեանքի էական խնդիրները։ «Նրանք ստեղծեցին միանգամայն ինքնատիպ այնպիսի գործեր, որոնք իրենց մէջ մարմնաւորուած հասարակական-քաղաքական մտածողութեամբ ու գաղափարներով՝ անտիկ շրջանի պատմագրութիւնից յետոյ, վաղ միջնադարի դարաշրջանում հանդիսացան պատմա-գիտական մտքի մի նոր ու բարձր փուլը, զարգացման մի նոր արտայայտութիւնը»[2]։

Հինգերորդ դարի դժուարին պայմաններում, երբ Հայաստանն ընկել էր Սասանեան Պարսկաստանի եւ Բիւզանդիայի տիրապետութեան տակ եւ հայ ժողովրդին սպառնում էր իսպառ բնաջնջուելու եւ գերիշխող ազգերի հետ միաձուլուելու իրական վտանգը, հայ պատմիչները, ներկայացնելով հայ ժողովրդի հեռաւոր անցեալի փառաւոր էջերը եւ հերոսական մաքառումները հայրենիքի անկախութեան եւ ազատագրութեան համար, նպատակ են հետապնդում ժամանակակից եւ յետագայ սերունդների մէջ արթնացնել ազգային ինքնաճանաչման ու ինքնագիտակցութեան ու ցրուած ուժերի միաւորման վեհ գաղափարները եւ նրանց դաստիարակել հայրենասիրութեան ոգով։

Այս տեսանկիւնից էլ դիտուած՝ հայ առաջին պատմիչների համար պատմագրական երկերի ստեղծումը ինքնանպատակ չի եղել։ Լծուելով անցեալի փառաւոր էջերի շարադրմանը՝ նրանք չեն հետապնդել անցեալի խնկարկմանը, այլ ջանացել իրենց գործերով

պատասխան տալ ժամանակակից իրականութեան առաջ քաշած հրատապ եւ կենսական հարցերին, որոնց մէջ գերագոյն էին ազգային ազատագրական պայքարը եւ հայ ժողովրդի գոյատեւումն ու քաղաքական ճակատագիրը։

Հինգերորդ դարի ազգային պատմիչները իրենց մատեաններում անդրադառնալով անցեալի պատմութեանը՝ դրա մէջ փընտռում էին կործանման եզրին կանգնած հայ ժողովրդի փրկութեան ելքերը եւ ապագայի լուսաբեր նեցուկները։

Ահա ա՛յս էլ պայմանաւորեց հինգերորդ դարում ստեղծուած պատմագրական կոթողների արժէքը, դերն ու նշանակութիւնը հայ ժողովրդի պատմութեան համար։

Հինգերորդ դարի փայլուն հայ պատմագրութիւնը ներկայացուած է ոսկեայ մի շղթայով, որն ընդգրկում է Կորիւն, Ագաթանգեղոս, Փաւստոս Բուզանդ, Մովսէս Խորենացի, Եղիշէ, Ղազար Փարպեցի անմահ անունները։

Հինգերորդ դարի պատմագրական կոթողները, պատմիչների իսկ վկայութեամբ, ստեղծուած են բարոյախօսական որեւէ նպատակով։ Այս առիթով արժէ յիշատակել պատմահայր Մովսէս Խորենացու ազգային խոր գիտակցութեամբ կլանուած խօսքերը, թէ, «Զի թէպէտ եւ եմք ածու փոքր, եւ թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, եւ զօրութեամբ տկար եւ ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբ, սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս, եւ արժանի գրոց յիշատակի ...»[3]։

Մաշտոցեան դարի մատենագրութեան մէջ «ադամանդի պէս շողում է Մովսէս Խորենացու «Հայոց Պատմութիւնը»»[4]։

Խորենացին «առաջինը, յղացել եւ իրականացրել է հայոց ամբողջական պատմութեան շարադրման գաղափարը, որն իր նշանակութեամբ անմիջապէս յաջորդում է Մաշտոցի դարակազմիկ յըղացմանն ու գործին»[5]՝ գրում է հայրենի անուանի պատմաբան Գ. Խ. Սարգսեանը։ Աւելին՝ Խորենացին «ցուցադրեց ժողովրդին նրա պատմական նկարագիրը, նրա ակունքները, եւ ի յայտ բերելով անցեալի փառաւոր էջերը, ուժ ու եռանդ ներշնչեց ժողովրդին՝ պայքարելու լուսաւոր ապագայի համար»[6]։

Խորենացին խոր գիտակցել է պատմութեան դերը։ Նա գովասանքի խօսքերի է արժանացնում այն մատենագիրներին, որոնք գրի են առել իրենց ժամանակի պատմութիւնը, որովհետեւ «Ի ձեռն որոց եւ մեր ընթեռնուլն զառ 'ի նոցանէ չարաձս բանից, ըստ աշխարհօրէն կարգաց իմաստնանալ ասեմք, եւ քաղաքակա-

նրս ուսանել կարգս, յորժամ այսպիսիս ընթերցասիրիցեմք իմաստութեան ճառս եւ զրուցատրութիւնս, որք են քաղդէացւոց եւ ասորեստանեաց, եգիպտացւոց եւ ելլենացւոց»[7]։

Հինգերորդ դարում պատմագրութեան նպատակների նման ըմբռնումը նոր երեւոյթ էր։ Խորենացին լաւապէս ըմբռնելով իր ապրած դարաշրջանի ոգին՝ անհրաժեշտ է նկատել փառաբանել հայրենիքի փառաւոր անցեալը եւ ցոյց տալ հայ ժողովրդի անհամար սխրանքները։ Պատմահօր նպատակն է եղել իր ժամանակի եւ ապագայ սերունդներին դաստիարակել քաջութեան, թշնամուն միշտ տագնապի, ահ ու սարսափի մէջ պահելու գաղափարով։

Յատկանշական է տիրակալ մարաց Աժդահակ թագաւորի եւ «քաջամարտիկ նիզակաւոր» Տիգրանի միջեւ տեղի ունեցած մենամարտի նկարագրութիւնը, ուր պատմահայրը անպարտելի է ներկայացնում հային. «Բայց գովեմ զքաջահասակն զիմ եւ զնիզակաւորն եւ զամենեւին բոլոր անդամովք համեմատն եւ 'ի գեղեցկութիւն աւարտեալ հասակի. քանզի առոյգ ամենայնիւ ըստ իրեարս պատշաճեալ, եւ ուժով ոչ զոք իւր ունելով զոյգ։ Եւ զի՞ երկայնեմ զբանս. քանզի 'ի լինել պատերազմին, նիզակաւ որպէս զՁուր հերձեալ զերկաթի ամուր հանդերձն, շամփրէ զԱշդահակ յընդարձակ տէգ նիզակին, եւ յամփոփել միւսանգամ զձեռն՝ արտաքս զկէս մասն թոքիցն հանդերձ զինաւն 'ի դուրս բերէ։ Բայց մարտն էր սքանչելի. զի քաջք դիպեալ քաջաց, ոչ վաղվաղակի թիկունս 'ի միմեանց դարձուցանէին. վասն որոյ յերկարեալ քարշէր գործ պատերազմին ժամս ձիգս։ Իսկ վախճան գործոյն առնէր մահն Աշդահակայ. եւ այսպիսի դիպուածս 'ի բարեբախտութիւն յաւելեալ, յաճախէր փառս Տիգրանայ»[8]։

Խորենացին ջերմ հայրենասէր է։ Նրա հայրենասիրութիւնը կազմել է իր աշխարհայեացքի ամենաէական կողմերից մէկը։

Պատմահօր հայրենասիրութեան բովանդակութիւնը հարուստ է, որի եւ հիմնական գծերից մէկը խանդավառ, գործունեայ, հայոց երկրի պետական անկախութեան, բարգաւաճման համար պայքարող թագաւորների, իշխանների փառաբանումն է։ Խորենացին գտնում է, որ բարիքներ եւ ազնիւ գործեր կատարած թագաւորները անմահ են, իսկ միւսները ապրում են այնքան՝ որքան տուել է նրանց կեանքը։

Այսպէս՝ խօսելով հայոց Վաղարշ թագաւորի մասին՝ նա գրում է. «Սա թագաւորեալ ամս քսան, մեռաւ. թէ լոկ եւ այլքն կեցին. բայց ասեմ զսա եւ յետ մահուանն կեալ, յաղագս բարի անուանն քան զթուլագոյնս, ի թագաւորաց»[9]։

Հայրենասիրութեան խօսուն արտայայտութիւն է Պատմութեան վերջաբանը՝ Ողբը։

«Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ, ողբամ զքեզ, հանուրց հիւսիսականաց վեհագոյն. զի բարձաւ թագաւոր եւ քահանայ, խորհրդական եւ ուսուցող. վրդովեցաւ խաղաղութիւն, արմատացաւ անկարգութիւն. դրդուեցաւ ուղղափառութիւն, կայկայեցաւ տգիտութեամբ չարափառութիւն։

«Ողորմիմ քեզ, եկեղեցի հայաստանեայց, խրթնացեալ 'ի բարեգարդութենէ բեմբին, 'ի քաջէն զրկեալ հովուէ եւ հովուակցէ։ Ոչ եւս տեսանեմ զբանաւոր քո հօտ 'ի վայրի դալարուոջ եւ առ ջուրս հանգստեան տածեալս, եւ ոչ 'ի փարախս հաւաքեալ՝ զգուշանալով 'ի գայլոց, այլ ցրուեալս անապատաց եւ գահավիժութեանց»[10]։

Հայ պետականութեան կործանումը եւ երկրում ստեղծուած այդ մռայլ կացութիւնը, ըստ Խորենացու, հետեւանք էր հայոց անմիաբանութեան, դաւաճանութեան եւ դաւանանքի ուրացման։ Եւ, ահա, պատահական չէ, որ պատմահայրը իր Պատմութեան մէջ առաջ է քաշել միասնութեան գաղափարը։ Այս պարզ երեւում է Աժդահակի Տիգրանին յղած թղթում, ուր շեշտուած են միասնութեան իմաստը ու զօրութիւնը։ Աժդահակը Տիգրանին գրել է. «Գիտէ սիրելի եղբայրութիւնդ քո՛, ոչ ինչ օգտակարագոյն 'ի կեանս աշխարհիս 'ի դիցն մեզ պարգեւեալ քան զսիրելեաց բազմութիւն, եւ այս՝ իմաստնոց արդեւք եւ հզօրագունից. զի այսպէս եւ արտաքուստ ոչ 'ի վերայ համարձակին խռովութիւնք, եւ եկեալքն վաղվաղակի հերքին. իսկ 'ի ներքս ոչ զմուտն յումեքէ գտեալ այսպիսւոյ չարութեան, հալածեալ լինին։ Արդ զայսպիսի շահ օգտութեան, որ 'ի բարեկամութենէ լինի, տեսանելով, խորհեցայ եւս հաստատուն եւ խորագոյն զսէրն՝ որ է 'ի մէջ մեր՝ հաստատել. զի երկոքեանս յամենայն կողմանց ամրացեալք ողջ եւ անշարժ զտէրութիւն մեր կալցուք»[11]։

Խորենացու հիմնական նպատակն է եղել շարադրել հայրենիքի փառաւոր անցեալը, «այն օրինակ ծառայեցնել ներկայիս՝ նեկալի բախտը տնօրինողներին եւ իրեն՝ ժողովրդին, եւ քաղաքացիականութեան դաս տալ նրանց»[12]։

Խորենացու Հայոց Պատմութիւնը իւրօրինակ մի երկ է։ Այն ունի պատմական ու գեղարուեստական մեծ արժէք։ Անուանի պատմաբան Գ. Խ. Սարգսեանը, որ յատուկ ուսումնասիրութիւններ ունի Խորենացու եւ նրա երկի մասին՝ գրում է, թէ ««Հայոց Պատմութիւնը» իր ծննդեան օրուանից դարեր շարունակ բանել ու գործել է գերագոյն արդիւնքով. կրթել է հայ հասարակութեան

չատ ու չատ սերունդներ, կազմակերպել նրա մտաւորականութեան գիտա-քաղաքական միտքը, [եւ] քաջութեան ու մարդկային բազում բարեմասնութիւնների օրինակներ ցուցադրել դժուարին ճանապարհ կերտող ժողովրդին»[13]։

Հինգերորդ դարի հայ պատմագրութեան հետապնդած նպատակները իրենց ցայտուն արտայայտութիւնն են գտել հայ պատմիչների ոսկեայ շղթայի ինքնատիպ օղակներից մէկի՝ Փաւստոս Բուզանդի Հայոց Պատմութիւն երկի մէջ։

Բուզանդը իր պատմութիւնը շարադրել է հինգերորդ դարի երկրորդ կէսին, հետապնդելով քաղաքական, կրօնական եւ դաստիարակչական որոշակի նպատակներ, որոնք ակնառու են ողջ Պատմութեան մէջ։

Ինչպէս արդէն նշել ենք՝ հեղինակի ապրած դարաշրջանին հայ ժողովուրդը կանգնած էր անդունդի եզրին։ Երկու հզօր եւ աշխարհակալութեան ձգտող պետութիւնները՝ Պարսկաստանը եւ Բիւզանդիան, պետականութիւնից զրկուած հայ ժողովրդի նկատմամբ ֆիզիկական բնաջնջման եւ ձուլման քաղաքականութիւն էին իրագործում։ Դարի հրամայական պահանջն էր հայրենասիրական խոր զգացմունքներով կրթել պանծալի անցեալ ունեցող հայ ժողովրդին, բարձրացնել նրա ազգային ինքնագիտակցութիւնը հայ պետականութեան վերանուաճման ուղղութեամբ։

Ելնելով հայոց երկրում տիրող կացութիւնից՝ Փաւստոս Բուզանդը նպատակ է ունեցել ցոյց տալ հայոց աշխարհի երբեմնի զօրութիւնը, պետական անկախութեան համար հայ ժողովրդի դիւցազնական կռիւները, եւ քարոզել այն գաղափարը, թէ հայ ժողովրդի անցեալին ձեռք բերած այդ բոլոր յաջողութիւնները արդասիք էին նրա աստուածապաշտութեան, իսկ անյաջողութիւնները, ձախողանքն ու փորձանքը հետեւանք էին «Տիրոջ» մոռացութեան։ Այս ընդգծուած է երկի հետեւեալ հատուածում. «Բայց որոնց որ նա հովւում էր, չէին լսում նրա ճշմարիտ խրատներին, այլ յանդիմանուելիս էլ՝ բացէ ի բաց ու համարձակ գործում էին իրենց մեղքերը, առանց վախի կատարում էին ամէն տեսակ չարիքներ՝ մոռանալով (Տիրոջ) եւ նրա պատուիրանները -- առհասարակ՝ թագաւորը, նախարարներն ու իշխանները։ Նրանցից է՛լ աւելի վատ էին միւս մարդիկ, որոնք ամբարշտացած էին մարդկանց նըկատմամբ եւ իրենց հայրերի առաջին հին գործերին դարձան. մեծերից մինչ փոքրերը անձնատուր էին եղել այս բանին։ Այս բոլորի համար Աստուած բարկանալով նրանցից երես դարձրեց, նըրանց ոտքի կոխան դարձրեց նրանց դէմ դուրս եկած թշնամիներ-

րին։ Որովհետեւ Տրդատի թագաւորութեան ժամանակից ի վեր (Տիրոջը) ճանաչելուց յետոյ (Աստուած) խաղաղութիւն պարգեւեց, նրանց չրջապատող թշնամիներին լռեցրեց, նրանց սահմաններից պատերազմները հեռացրեց, եւ ոչ ոքի հետ նրանք խռովութեան կամ թշնամութեան գործ չունեցան ու ապրում էին կատարեալ խաղաղութեան մէջ։ Իսկ այն ժամանակ Տէրը գրգռութիւն առաջացրեց նրանց բոլոր սահմաններում, զօրացրեց նրանց թշնամիներին, եւ ոչ մէկը ուրիշ ազգերի թագաւորներից նրանց բարեկամ չէր, այլ բոլորը թշնամի էին»[14]։

Փաւստոս Բուզանդի Պատմութեան մէջ առաջ է քաշուած միասնական պետութեան սրբագործման գաղափարը, որն ըստ հեղինակի՝ իրագործելի է ժողովրդի զանազան խաւերի միասնականութեամբ։

Միասնականութեամբ է, որ հայերը հասել են յաղթանակի եւ փախուստի մատնել թշնամուն։ Այս փաստելու համար պատմիչը անդրադարձել է անցեալին եւ գրել, թէ «Վասակ զօրավարի ձեռքի տակ այդ ժամանակ պատրաստ գտնուեց պատերազմական գործի պիտանի մօտ վաթսուն հազար մարդ, ընտիր պատերազմողներ, որոնք միաբան, միասիրտ, յօժարակամ գնում էին պատերազմի, որպէսզի հասնեն ու պատերազմեն իրենց կանանց ու որդիների համար, իրենց կեանքը զոհեն երկրի համար, իրենց բնակած տեղերի համար, կռուեն իրենց եկեղեցիների համար, սուրբ եկեղեցիների սպասաւորների համար, իրենց հաւատի ու Աստծու համար, իրենց ընիկ տէրերի՝ Արշակունիների համար»[15]։

Ահա, այսպէս, «միաբան [եւ] միասիրտ» գործունէութեամբ, հայերը սրի են անցկացնում պարսից զօրքերը եւ փախուստի մատնում պարսից թագաւորին[16]։

Պատմիչի ստեղծագործութեան առանցքը հայոց երկրի ազատութեան գաղափարն է։ Նա գիտակցել է հայրենիքի սէրը, հայրենի հողի ու ջրի կենարարութիւնն ու զօրութիւնը։ Հետեւաբար պատահական չէ, որ Պատմութեան մի գլուխը նուիրել է հայրենի հողի ու ջրի պատկերագրութեան։

Վիպականն ու պատմականը մի ամբողջութեան մէջ դնելով՝ նա ստեղծել է հայոց թագաւոր՝ Արշակ Բ.ի կերպարը՝ իր մարդկային գծերով եւ իր ճակատագրի ողբերգականութեամբ։ Պարսից Շապուհ արքան, երկարամեայ պատերազմներից յետոյ, տեսնելով որ զէնքով անկարող է յաղթել Հայոց Արշակ Բ. թագաւորին՝ դիմում է խարէութեան։ Եւ խաղաղութեան դաշինք կնքելու պատրուակի տակ «մեծ աղաչանքներով, ընծաներով ու հրովարտակնե-

բով Արշակ թագաւորին սիրով իր մօտ կանչեց, որ այնուհետեւ իրար մէջ սէր եւ խաղաղութիւն ու մեծ բարեկամութիւն հաստատեն»[17]։

Երբ հայոց թագաւորը ստանում է կնքուած աղը, իբրեւ սրբազան երդում, հաւատում է նրան եւ գնում է Տիզբոն։ «Քաւդէաների, ասորահմաների» խորհրդով, Շապուհը Արշակ Բ.ի հաւատարմութիւնը փորձելու նպատակով՝ հրամայում է Հայաստանից բերել հող եւ ջուր եւ շաղ տալ իր խորանի յատակի մի մասի վրայ, իսկ միւս մասը թողնել պարսկական հողով։ Եւ դրանից յետոյ Շապուհը Արշակ թագաւորի ձեռքից բռնած միասին ճեմում են խորանում։ Երբ անցնում են պարսկական հողի վրայ, Արշակը՝ Շապուհի այն հարցին թէ «Արշակ թագաւոր հայոց, դու ինչո՞ւ ինձ թշնամի եղար. ես քեզ որդու նման սիրեցի ...»,— պատասխանում է երկչոտ ու խեղճացած եւ իրեն ճանաչում է յանցաւոր. «Մեղանչեցի եւ յանցաւոր եմ քո առաջ. որովհետեւ ես եկայ, քո թշնամիներին յաղթեցի ու կոտորեցի եւ յոյս ունէի քեզանից կեանքի պարգեւ ստանալու, բայց իմ թշնամիներն ինձ մոլորեցրին, քեզանից վախեցրին եւ փախչել տուին։ Եւ երդումս, որով քեզ երդուեցի, ինձ քո առաջը բերեց, ու ահա եկայ քո առաջ, եւ ահա ես՝ քո ծառան, քո ձեռքում եմ. ինչպէս ուզում ես վարուիր ինձ հետ, եթէ կամենում ես, սպանիր, որովհետեւ ես՝ քո ծառան, շատ յանցաւոր եմ քո առաջ, մահապարտ եմ»։

Իսկ երբ կանգնում են հայրենի հողի վրայ՝ ապա այդ պահին Արշակ թագաւորը դառնում է անպարտելի մի քաջ եւ խօսում է ըմբոստութեամբ. «Հեռու՛ ինձանից, չարագործ ծառայ, որ տէրերիդ վրայ տէր ես դարձել, եւ ես չեմ ների քեզ ու քո որդիներին իմ նախնիների վրէժը եւ Արտաւան թագաւորի մահը։ Որովհետեւ այժմ դուք՝ ծառաներդ, մեր՝ ձեր տէրերի, բարձն էք յափշտակել, բայց ես չեմ թոյլ տայ այդ, մինչեւ դարձեալ մենք մեր տեղը չգրաւենք»[18]։

Ի վերջոյ, Շապուհի հրամանով, երկաթէ շղթաներով կապկըպուած հայոց արքային արգելափակում են Անլուշ բերդում, ուր եւ նա ինքնասպանութեամբ վերջ է տալիս իր կեանքին։

Գրելով հայոց Արշակ Բ. թագաւորի ողբերգական մահուան, հայրենի հողի եւ ջրի մասին, Փաւստոս Բուզանդը նպատակ է ունեցել ցոյց տալ, որ հայրենի հողն ու ջուրն են ուժի ու կենսունակութեան աղբիւրը։

Հինգերորդ դարի հայ դասական մատենագրութեան հոյակապ նշխարքներից է եղիշէ Պատմիչի Վասն Վարդանայ եւ Հայոց

Պատերազմին երկը, որը նուիրուած է լիշեալ դարի կէսին երկրի ինքնուրոյնութեան եւ դաւանանքի պաշտպանութեան համար հայ ժողովրդի մղած պայքարին։ Այս երկասիրութիւնը, ականատես պատմագրի իւրովի յօրինուածքով, սերունդներին հայրենասիրութեամբ դաստիարակելու ակնկալութեամբ գրուած յոյժ կարեւոր եւ ցանկալի մի գործ է։ Արժէ լիշատակել պատմիչի՝ իր երկասիրութեան նպատակի բնութագրութիւնը. «Զոր եւ մեր ընդ հրամանին քում ընկալեալ՝ յօժարութեամբ ձեռնարկեցաք գալս ինչ, որ է մխիթարութիւն սիրելեաց եւ յոյս լուսացելոց, քաջալերութիւն քաջաց, կամակարութեամբ յարձակեալ ի վերայ մահուան, յառաջոյ տեսանելով զզօրագլուխն յաղթութեան, որ ոչ ումեք ոտնահար լինի թշնամութեամբ, այլ ամենեցուն ցուցանէ զիւր անպարտելի զօրութիւնն»[19]։

Շարադրելով իր երկը՝ Եղիշէն ցանկացել է, ինչպէս ինքն է գրել, «Ցայսմ յեթն գլուխս կարգագրեալ եւ եղեալ ծայրալիր պարապմամբ զսկիզբն եւ զմիջոցն եւ զկատարածն, զի հանապազորդ ընթեռնուցուս, լսելով զառաքինեացն զքաջութիւն, եւ զլեռս կացելոցն զվատթարութիւն ... »[20]։

Եղիշէ Պատմիչը կոչ է արել միաբանութեան, որովհետեւ «զուգութիւն է մայր բարեաց, անզուգութիւն ծնող չարեաց»[21]։ Եղիշէի Պատմութեան գաղափարական նպատակը հայ ժողովրդի ազգային գոյապայքարի փառաբանումն է։ Պատմիչը պետականութիւնը կորցրած հայ ժողովրդի պատմական ճակատագրի ուղին տեսնում է մաքառման եւ իր ինքնուրոյն գոյութեան եւ դաւանանքի համար մինչեւ ի մահ նահատակուելու ուժի եւ կարողութեան մէջ։

Զգալով Պարսկաստանից եկող ահաւոր վտանգը, եւ կռահելով պարսից արքունիքի հեռուն գնացող քաղաքական նպատակը՝ Արտաշատի ժողովը, հայ հոգեւորականութեան միաբանութեամբ եւ ամբողջ բազմութեան համաձայնութեամբ, վճռաբար մերժում է պարսից Յազկերտ Բ. թագաւորի հաւատափոխութեան առաջարկը։

Ժողովականները իրենց մերժողական պատասխանի մէջ շեշտում են, թէ «Ցայսմ հաւատոց զմեզ ոչ ոք կարէ խախտել, ոչ հրրեշտակք եւ ոչ մարդիկ, ոչ սուր եւ ոչ հուր, ոչ ջուր, ոչ ամենայն զինչ եւ են դառն հարուածք»[22]։ Պարմիչի հետապնդած գլխաւոր նպատակներից մէկն է սովորեցնել, որ հայրենիքի սրբազան հողի, ջրի ու իր դաւանանքի համար ամէն ոք պատրաստ պէտք է լինի զոհել իր անձը՝ անտեսելով մահը։ Եւ բոլորովին պատահական չէ, որ նա «գիտակցուած կեանքի է կոչել մարդկանց»[23]։

Յիշատակութեան է արժանի մինչեւ հիմա իր թարմութիւնը պահպանած երկի այն հատուածը, ուր պատմիչը գրում է «... Մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է։ Որ զմահ ոչ գիտէ՝ երկնչի ի մահուանէ. իսկ որ գիտէ զմահ՝ ոչ երկնչի ի նը-մանէ»[24]։ Ահա այս խօսքերով է եղիշէ Պատմիչը իմաստաւորում հայ կտրիճների նահատակութիւնը։ Եղիշէն փառաբանում է մարդ-կային բանականութիւնը, ուսումը, գիտութիւնը՝ նպատակ ունե-նալով բարձրացնել հայ ժողովրդի ինքնագիտակցութիւնը, խիզա-խութիւնն ու տոկունութիւնը։ Համաձայն հանճարեղ պատմիչի՝ մարդ արարածը չարիքներ է մտածում եւ գործում տգիտութիւ-նից եւ անուս լինելուց։ «Եւ այս ամենայն չարիք մտանեն ի միտս մարդոյ յանուսումնութենէ։ Կոյր զրկի ի ճառագայթից արեգական, եւ տգիտութիւն զրկի ի կատարեալ կենաց։ Լաւ է կոյր աչօք՝ քան կոյր մտօք։ Որպէս մեծ է հոգի քան զմարմին՝ այնպէս մեծ է տե-սաւորութիւն մտաց՝ քան զմարմնոց։

«Եթէ ոք կարի առաւելեալ իցէ աշխարհական մեծութեամբ, եւ մտօքն աղքատագոյն, այնպիսին ողորմելի է քան զբազումս. որպէս եւ տեսանեմք իսկ՝ ոչ միայն ի չափաւոր մարդիկ՝ այլ եւ յոր մեծն է քան զամենայն։

«... Բոլոր մարմնոյս հոգի է կենդանութիւն, իսկ մարմնոյ եւ հոգւոյ միտք են կառավար. եւ որպէս առ մի մարդ՝ այնպէս առ բոլոր աշխարհս»[25]։

Պատմագրի ապրած դարաշրջանի պահանջն էր ցոյց տալ, որ հայերի կրօնափոխութիւնն անիրագործելի է։ Հայրենասէր պատ-միչը հասել է այդ նպատակին թշնամու՝ պարսիկ մոգպետի խօս-քերով. «Թող գրեմ եւ ցուցանեմ մեծ թագաւորին, զի ի բաց թո-ղացուցանէ զայսպիսի իրաց առաջարկութիւն. զի եթէ եւ ինք-եանք աստուածքն եկեսցեն լօգնութիւն, չէ հնար օրինացս մոգու-թեան ի Հայս առնուլ զհաստատութիւն. որպէս զփորձ առ ի զմիա-բանութեան ուխտին եկեղեցւոյ։ Զի թէ էին զօրք աշխարհիս մոկք, ոչ ինչ խնայէին սոքա ի նոսա սատակմամբ՝ ոչ միայն զարտաքին-սքն, այլ եւ յեղբարս եւ յորդիս եւ յամենայն մերձաւորս իւրեանց, նաեւ ոչ յանձինս իւրեանց։ Մարդք որ ոչ ի կապանաց զանգիտեն, եւ ոչ ի տանջանաց երկնչին, եւ ոչ ի ստացուածոց պատկառին, եւ որ յետին չար է քան զամենայն չարիս՝ զմահ քան զկեանս ընտր-բեն, ո՞վ է որ կարէ նոցա դիմակաց լինել»[26]։

Ղազար Փարպեցին, որն իր արժանի տեղն է գտել հինգերորդ դարի հայ պատմիչների համաստեղութեան մէջ՝ գրել է մի երկ, ո-րի նպատակն է եղել «Բազում զգուշութեամբ գրել եւ կարգել մի

ըստ միոջէ զամենայն զհոգեւորացն զառաքինութիւնս եւ զարանց քաջաց զյաւութիւնն։ Որպէս զի զհոգեւորացն զբարի վարսն լրեալ բազմութեան ժողովրդոցն՝ նմանողք լինել ցանկասցից մարդիկ ճգնութեանց նոցա, եւ քաջքն լսելով զալլոց զգործսն յառաջագոյն քաջացելոցն, յաւելեալ յանձանց քաջութիւն՝ անուանի յիշատակ թողցեն զկնի իւրեանց՝ անձանց եւ ազգի։ Իսկ ծոյլքն եւ վատքն հայելով յանձինս եւ լսելով զալլոց զպարսաւանս՝ ի բարի նախանձն կրթեալք ջանասցին յաւանալ»[27]։

Պատմիչը ըմբռնել է իրեն յանձնարարուած գործի նշանակութիւնն ու դժուարութիւնը։ Նա գրել է. «Եւ արդ՝ այսպէս հարկաւորեալ բռնադատեաց զտկարութիւնս մեր տէրն Մամիկոնէից Վահան, սպարապետն Հայոց եւ մարզպան, զձեռն արկանել ի գործ, որ ի վեր քան զկար գիտութեան մերոյ էր, քանզի էր քան զքան...»[28]։

Փարպեցու կարծիքով պատմական երկ գրելիս անհրաժեշտ է լինել անկողմնակալ, ունենալ զանազան գիտելիքների անսպառ իմացութիւն եւ հմտօրէն կատարել «խօսքերի վայելուչ դասաւորութիւն», եւ իր այդ խորհրդի համար հեղինակը աղաչում է աղօթասէր անձերից սատարել իրեն. «Զի ոչ փոքր ինչ կասկած է՝ աներկիւղ այսպէս ումեք տալ զանձն յայսպիսի վաստակս, ու պիտոյ են յարմարութիւնք բանից, որոշեալ կարգադրութիւնք ըստ հրամանի կանոնեալ գիտութեանն, բերել պատկառելով ստուգագրութիւն անպարսաւ յականջս իմաստասէր լսողաց. չյաւելուլ զանեղեալն՝ յընդունայն ամմունս բանից. չնուազեցուցանել զեղեալն եւ կարճակտուր պատմել բանիւք անփութութեամբ. այլ զբնաւն ողջախոհ զգուշութեամբ բերել ի յայտնութիւն։ Եւ վասն զի են աստ պէտք բազում երկիւղագրն պատրաստութեան՝ արդ նպաստեալ իմում տկար խորհրդոյս՝ աղաչեմ, սատարեցէ՛ք ամենայն աղօթասէր անձինք, ձերովք առ Աստուած խնդրուածովք օգնականութեամբք։ Որովք արդարապատումն ճշգրտաբանեալ զեղեալ ի վեր քան զիս գործոյս հարկաւորութիւն՝ ընդ յորձանս մեծապատումն ծաւալացս նաւեալ մտաւոր ստուգաբանութեամբ՝ հասից բարեխօսութեամբ սրբոց յանալեկոծ եւ յապահով նաւահանգիստն»[29]։

Այս մղումով Փարպեցին ստեղծել է իր Պատմութիւնը, ուր նկարագրել է դարաշրջանի պատմական երեւոյթների ծագումն ու զարգացումը։ Պատմիչը հանգամանօրէն շարադրել է 481-484 թուերի Վահան Մամիկոնեանի գլխաւորութեամբ հայ ժողովրդի ծաւալած ազատագրական պայքարը։ Նրա երկը միակ ընկզբնաղբիւրն է հայոց այդ պատերազմի պատմութեան համար։ Իր նախորդների պէս՝ Փարպեցու հետապնդած նպատակներից էր ցոյց

տալ հայոց դաւանանքի զօրութիւնը, հայրենասիրութիւնը եւ գոյատեւման համար մղած հերոսական պայքարը։ Փարպեցին շատ յաճախ իր գլխաւոր նպատակներն ու գաղափարները արտայայտել է իր հերոսների միջոցով։ Այսպէս՝ Փարպեցին անհրաժեշտ է համարել ցոյց տալ, որ իր ապրած օրերում անմիաբանութիւնը, դաւաճանութիւնը, նենգութիւնը պառակտում ու տկարացնում էին հայ ժողովրդի ուժերը եւ թշնամուն պարտութեան մատնելու գործը դարձնում անհնարին։ Փարպեցին մեծ յաջողութեամբ հասել է իր այդ նպատակին։ Նա Վահան Մամիկոնեանի բերանով պարսիկ զօրավարին ասել է. «Եւ յայսմ կռուի մի՛ զայս զմտաւ ածեալ պարծիք, թէ աւելի ինչ քաջութեամբ յաղթեցէք մեզ. այլ ի մեր երկպառակութենէ եւ ի նենգելոյ եղեւ մեզ վնաս»[30]։

Հայ ժողովրդի յաղթութեան գործը Փարպեցին կապում է ազգի միասնութեան հետ։

Պատմիչը հանդէս է գալիս հայ եկեղեցու պաշտպանի դերում։ Նրա հիմնական նպատակն է եղել ցոյց տալ հայ ժողովրդի դաւանանքի զօրութիւնն ու անխորտակելիութիւնը։ Դրա վառ արտայայտութիւնն է կրօնական եւ հայրենասիրական ջերմ խօսքերով շաղկապուած Յովհան Կաթողիկոսի ճառը, ուր ասուած է, թէ «... սիրեցէք զեկեղեցի, եւ սիրեցայք յեկեղեցւոյ. զթագաւորս քաղցրացոյց եկեղեցի, զգազանս ընդելացոյց, զգայլս գառինս արար. զձեզ պայծառացոյց, զթշնամիս զճշմարտութեան ամաչեցոյց։ ... Ո՞ւր են առանց Աստուծոյ գոռոզացեալքն. ո՞ւր են առանց Աստուծոյ իշխանացեալքն. ո՞ւր են արիւնահեղքն ... ո՞ւր են եկեղեցւոյ թշնամանիչքն, առատնհարուք օրինացն, սրբութեանն պղծիչք, չինիչք մոխրատանցն, մոռացողք ճշմարտութեանն, հայհոյողք արդարութեան.— փախե՛ն, կորացա՛ն, ամաչեցի՛ն»[31]։

Վեհ նպատակամղումներով առաջնորդուած պատմագրական երկեր են ստեղծել Ագաթանգեղոսը եւ Կորիւն Վարդապետը։ Ագաթանգեղոսը իր գրքի յառաջաբանում գրել է. «Արդ՝ ջան յանձին կալեալ մատնել ի պատմագիր մատենիցս խորութիւն, ցուցանել այնոցիկ, ոյք իմաստութեամբ կամիցին ունկնդիր լինել օգտակար պատմութեանս»[32]։

Ահա սա՛ էլ պայմանաւորել է Ագաթանգեղոսի ստեղծագործութեան միտումը։ Գիտակցելով պատմելիքի պատմական կարեւորութիւնը եւ հայրենի մատեանների դերը իր ժամանակի եւ յետագայ սերունդների դաստիարակման գործում՝ հեղինակը գրել է. «Արդ՝ ելից ի մտաց երիվարն, եւ յարմարեցից զաստարէզն հանճարոյ. ուղղեցից զնպատակն խորհրդոյ, եւ թափ տաց ուժի բազկօքս եւ

ձգեցից ի կորով. գրչի մատանցս, եւ լեզուաւս գիսորհուրդս յուզեցից, եւ չրթունքս ի չշնջել իմաստունս կարասցեն, եւ կարգել հաստատական, լեղյեղուկ հոլովել զանիւ պատմութեան բանիցս, զի կամակարագոյնս նաւիցեմք զալեօք ժամանակագրական ծովուս. պատմել յազգ յայլ ժողովրդին ստացելոյ, որք օրհնեսցեն զտէր, որք յետ այսր անցեալ ժամանակաց գալոցն իցեն, որք հարցեալ զհայրենական մատեանսն՝ պատմեսցի նոցա, եւ զծրագիր կարգեալսն՝ եւ ասասցի նոցա»[33]։

Ագաթանգեղայ Պատմութեան մէջ տրուում է պատմութիւնը քրիստոնէութեան Հայաստան մուտքի՝ հիմնական նպատակ ունենալով ջատագովել ու պաշտպանել քրիստոնէութիւնը, ցոյց տալ հեթանոսութեան ոչնչութիւնը, քրիստոնէութեան առաւելութիւնը միւս կրօններից, եւ այդ կրօնի սկզբունքները եւ գաղափարները քարոզել ու սովորեցնել սերունդներին։

Հեղինակը իր այս նպատակին հասել է Գրիգոր Լուսաւորչի խօսքերով. «Վասն զի տուաւ ի ձեռս իմ պատմել ձեզ զհրամանս Աստուծոյ, դարձուցանել զձեզ ի ստուգութիւն, ի ճշմարտութեան ճանապարհն, ի բաց լինել ձեզ յունայնութեան պաշտամանց անտի, ի քարեղէն, ի փայտեղէն, յարծաթագործ, ի պղնձագործ պատկերաց այտի, որ ոչ ինչ իսկ են եւ ոչ ումեք պիտանացու. դառնալ առ Աստուած կենդանի, որ արար զերկինս եւ զերկիր եւ զծով եւ զամենայն որ է ի նոսա, եւ ի բան նորա՝ յՈրդին միածին, եւ ի Հոգին կենդանի եւ կենդանարար, սրբիչ եւ քաւիչ երկրպագուաց եւ փառաւորչաց իւրոց»[34]։

Գիտակցելով հայ ժողովրդի ինքնուրոյն գոյութեան ապահովման գործում դաւանանքի ուրացութեան ծանր եւ աղէտաբեր հետեւանքները՝ պատմիչը անհրաժեշտ է գտել զգուշացնել հայ ժողովրդին այդ հետեւանքների մասին։ Նա գտնում է, որ ուրացողները կորցնում են իրենց անձերը եւ մեծ վնաս հասցնում իրենց երկրին. «այնպիսիքն զանձինս կորուսանեն, եւ աշխարհի մեծ ոճիրս վնասուց ի նոցանէն ընդոստուցանեն ...»[35]։

Հայ ժողովրդի պատմութեան մէջ մեծ ու ճակատագրական իրադարձութիւններից մէկի՝ գրերի գիւտին է նուիրուած Կորիւն Վարդապետի Վարք Մաշտոցի երկը։

Գրքի յառաջաբանից անմիջապէս յայտնի են դառնում հեղինակի մղումն ու նպատակադրումը. «Զազքանազեան Ազգին եւ ըզՀայաստան աշխարհին գաստուածապարգեւ գրոյն, եթէ երբ եւ յորում ժամանակի մատակարարեցաւ եւ որպիսի արամբ այնպիսի նորոգատուր աստուածեղէն չնորհս երեւեցաւ եւ վասն նորին լու-

սաւոր վարդապետութեան եւ հրեշտակաբար կրօնիցն առաքինութեան գմտաւ ածելով յիշատակարանս առանձին մատենանշան ծաղկեցուցանել ...»[36]։ Ահա այս է եղել հեղինակի մղումը — գրել Մաշտոցի վարքը եւ տալ նրա գործին գնահատանքը։

Հիմնաւորելու համար Մաշտոցի կենսագրութիւնը գրելու կարեւորութիւնը՝ Կորիւն Վարդապետը նշել է, որ այն պէտք է գրուի «ոչ ի պարծանս գովութեան, այլ զի օրինակ եւ կանոն զկնի եկելոցն պաշտիցի. որպէս ի նոյն իսկ զի բարեաց գործոց նախանձաւոր լինել ամենեցուն»[37]։

Ահա այս խօսքերի մէջ էլ ամփոփուած է երկասիրութեան հիմնական նպատակը՝ բարի գործել եւ հետեւել բարի գործերին։

Մաշտոցեան դարի վերոյիշեալ նշանաւոր պատմագիրների սեւեռուն նպատակն է եղել ոչ միայն ուսուցանել պատմութիւնը ժամանակակիցներին եւ գալիք սերունդներին՝ այլեւ նրանց մէջ արթնացնել եւ արմատաւորել արժանապատուութեան ու հայրենասիրութեան վեհ գաղափարները, նրանց ոգեշնչել եւ մղել նորանոր սխրանքների եւ հաւատ սերմանել առաքինի եւ ճշմարիտ գործերի յաղթանակի նկատմամբ։ «Նրանք ձգտել են պատմութեան ուժով ու միջոցով յաղթահարել իրենց ժամանակների դառն իրականութիւնը, պատմութեան մէջ տեսնելով ուսուցանողի եւ դաստիարակչի հզօրագոյն կարողութիւնը — ուժը»[38]։

Հինգերորդ դարի հայ պատմագիրները ստեղծելով պատմական արժէքաւոր կոթողներ, որոնք նուիրուած են եղել անցեալի եւ իրենց ապրած պատմական ժամանակաշրջանի հայ ժողովրդի քաղաքական ու հոգեւոր կեանքում տեղի ունեցած կարեւոր իրադարձութիւններին՝ հետապնդեցին մեծ նպատակ։ Այդ նպատակը հայ ժողովրդի ազգապահպանումն ու անկախութիւնն էր։ «Դարերն ու սերունդները շատ բանով են պարտական այդ դարի պատմագիրների փայլուն համաստեղութեանը, որի ստեղծած պատմական շատ անզուգական արժէք ներկայացնող ինքնուրոյն եւ թարգմանչական երկերը այսօր մտել են համաշխարհային պատմագրութեան ոսկէ ֆոնդը»[39]։

Այս շրջանի հայ պատմիչների երկերը, բոլոր ժամանակներում, հայ ժողովրդի համար հանդիսացել են հոգեհարազատ ստեղծագործութիւններ։

Դրանք մեծ դեր են խաղացել հայ ժողովրդին ոգեշնչելու եւ դէպի իր սեփական ուժերը եւ դէպի ապագան հաւատով նայելու գործում։

ՃԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Մ. Մկրեան, *Մովսէս Խորենացի*, Երեւան, 1970, էջ 3-4:
2. Նոյն, էջ 3:
3. Սրբոյ Հօրն Մերոյ Մովսէսի Խորենացւոյ *Պատմութիւն Հայոց*, Թիֆլիս, 1910, էջ 8: Այսուհետեւ՝ Խորենացի:
4. Գ. Խ. Սարգսեան, «Մովսէս Խորենացին եւ նրա "Հայոց Պատմութիւնը"», *Պատմաբանասիրական Հանդէս*, թիւ 2, Երեւան, 1973, էջ 43: Այսուհետեւ՝ Սարգսեան:
5. Նոյն, էջ 44:
6. Նոյն:
7. Խորենացի, էջ 8:
8. Նոյն, էջ 82:
9. Նոյն, էջ 202:
10. Նոյն, էջ 375-376:
11. Նոյն, էջ 78-79:
12. Սարգսեան, էջ 59:
13. Նոյն:
14. Փաւստոս Բուզանդ, *Պատմութիւն Հայոց*, թարգմանութիւնը, ներածութիւնը եւ ծանօթագրութիւններն ակադեմիկոս Ստ. Մալխասեանցի, Երեւան, 1968, էջ 102-103:
15. Նոյն, էջ 192:
16. Նոյն, էջ 192-193:
17. Նոյն, էջ 210:
18. Նոյն, էջ 213-214:
19. Եղիշէի *Պատմութիւն Վարդանանց* Ըստ Անձեւացեացն Օրինակի, Տփխիս, 1879, էջ 3: Այսուհետեւ՝ Եղիշէ:
20. Նոյն, էջ 2:
21. Նոյն, էջ 3:
22. Նոյն, էջ 54:
23. Լ. Հ. Բաբայեան, *Դրուագներ Հայաստանի Վաղ Ֆէոդալիզմի Դարաշրջանի Պատմագրութեան* (5-8րդ դարեր), Երեւան, 1977, էջ 221: Այսուհետեւ՝ Բաբայեան:
24. Եղիշէ, էջ 17:
25. Նոյն, էջ 17-18:
26. Նոյն, էջ 83-84:
27. Ղազարայ Փարպեցւոյ *Պատմութիւն Հայոց եւ Թուղթ Առ Վահան Մամիկոնեան*, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Մալխասեան, Տփղիս, 1904, էջ 5:
28. Նոյն, էջ 6:
29. Նոյն, էջ 6-7:
30. Նոյն, էջ 137:

31. Նոյն, էջ 180:
32. Ագաթանգեղայ *Պատմութիւն Հայոց*, Թիֆլիս, 1914, էջ 14:
33. Նոյն, էջ 17-18:
34. Նոյն, էջ 128:
35. Նոյն, էջ 74:
36. Կորիւն, *Վարք Մաշտոցի*, բնագիրը, ձեռագրական այլ ընթերցուածներով, թարգմանութեամբ, յառաջաբանով եւ ծանօթագրութիւններով ի ձեռն պրոֆ. Մանուկ Աբեղեանի, Երեւան, 1941, էջ 22:
37. Նոյն, էջ 32:
38. Բաբայեան, էջ 371:
39. Նոյն, էջ 372:

Ա. Թ.

AIMS WHICH THE FIFTH CENTURY ARMENIAN HISTORIOGRAPHY PURSUED

(SUMMARY)

DR. ARSHALOUYSE H. TOPALIAN

With the fifth century Armenian Renaissance, which followed the invention of the Armenian alphabet by Mesrop Mashtotz, a number of Armenian historians gave themselves the task and duty of writing the history of the Armenian nation. Some of them were contemporaries to the events they related, yet most of them were full-fledged historians educated in the best possible centers of Greek and Assyrian culture and universities of the time, hence were well-informed and well-disciplined with their own right. Of these Dr. Topalian talks of Moses of Khoren, Faustus of Byzantium, Yeghishe Patmich, Ghazar of Parbi, Agathangelos, and Korun. Moses of Khoren is called "The Father of Armenian History", and is the first man who has ever written the history of the Armenians from its dawn to the mid-fifth century. The others are all contemporaries of the events they relate and have usually taken active part in the events which make the history of the time, and, in a way, they keep the continuity both of the events of the day and the nation and its country.

But what is of great importance for them all is the fact that all of them dig deep in the past and present to bring forth the elements which have kept the Armenian Nation and the Armenian Fatherland strong enough to face the dangers and the political, social and religious upheavals of all times and come out victorious and able to keep their national existence.

The aim pursued by all the historians of the time was to imbue their present and future readers with necessary personal moral and patriotic courage and national, social, and religious strength so as to be able to face the military and imperialistic designs of both the Persian and Byzantine camps, and which endangered the political and national existence of Armenia and the Armenians.

By making direct use of the fifth century works of the aforesaid historians, Dr. Topalian has endeavored to point out the one particular resemblance of them all-- the element of national conduct and the anxiety they have in front of the imminent dangers the Armenians face and the self-given duty to prepare their people to the threats at hand.